

Մրցույթի հայտարարություն

ՀՀ Սյունիքի մարզի «Շաղաթի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ -ի տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար:

ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված՝ պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի 2-րդ կետի համաձայն «Շաղաթի միջնակարգ դպրոց» և «Անգեղակոթի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ների կոլեգիալ կառավարման մարմինը՝ միացյալ խորհուրդը, հայտարարում է մրցույթ տնօրենի պաշտոնի թափուր տեղն զբաղեցնելու համար:

1. Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1) ՀՀ քաղաքացիությունը,

2) ուսումնական հաստատության կառավարման իրավունքը (հավաստագիր):

2. Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝

1) դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով.

2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ

նույնականացման քարտի պատճենը.

3) հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը.

4) տվյալ հաստատության զարգացման ծրագիրը թղթային և

էլեկտրոնային տարբերակներով.

5) ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են «Շաղաթի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ –ում **2022 թվականի փետրվարի 11-ից մինչև մարտի 3-ը ներառյալ ամեն օր՝ ժամը 9.00-ից մինչև ժամը 15.30-ը**, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2022 թվականի մարտի 18-ին** ժամը 13:00-ին «Շաղաթի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ –ում: Հասցե՝ Սյունիքի մարզ հ. Սիսիան. բն. Շաղատ, փ.8, 2.17

Տեղեկությունների համար դիմել՝ խորհրդի կողմից լիազորված անդամ **Լալա Թորոսյանին: Հեռ. (077 57 82 00), էլ. հասցե shaghat@schools.am:**